«ՌԵԱԼ ԲՈՒՍԻՆԵՍՍ» ՍՊԸ

Արաբկիր, Ադոնց 6/2, 40
ք. Երևան 0014, Հայաստան
Հեռ.: +37495 88-59-09
Էլ. Փոստ: business.real@mail.ru

"REAL BUSINESS" LLC

Arabkir. Adonts 6/2, 40
Yerevan 0014, Republic of Armenia
Tel.: +37495 88-59-09
E-mail: business.real@mail.ru

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ
ՊԱՐՈՆ ԱՐՍԵՆ ԿԱՐՈՅԱՆԻՆ

Հարգելի գործընկեր,

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5.1 հոդվածը և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 50-րդ կետի համաձայն Ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով նախատեսված կարգով, եթե ներկայացվել է նաև որակավորման ապահովումը հիմնավորող փաստաթուղթը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում է՝ համաձայն ընտրված մասնակցի կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված առաջարկի: Եթե կնքված պայմանագրի գինը գերազանցում է գնումների բազային միավորը, ապա կնքված պայմանագրի մասին հայտարարությունում նշվում է նաև, որ դրանով սահմանված ժամկետում պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում՝ ինչպես գնման տվյալ գործընթացին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած մասնակիցները, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած հասարակական կազմակերպությունները և լրատվական գործունեություն իրականացնող անձինք, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնման տվյալ ընթացակարգին մասնակցելու հրավերի հիման վրա հայտ ներկայացրած մասնակիցները կարող են պատվիրատուին ներկայացնել կնքված տվյալ պայմանագրի արդյունքի ընդունման գործընթացին պատասխանատու ստորաբաժանման հետ համատեղ մասնակցելու գրավոր պահանջ: Հայտարարությունում նշվում է նաև պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի էլեկտրոնային փոստի պաշտոնական հասցեն: Գրավոր պահանջին կից ներկայացվում են՝ այն էլեկտրոնային փոստի հասցեները և հեռախոսահամարները, որոնց միջոցով պատվիրատուն կարող է կապ հաստատել պահանջը ներկայացրած անձի և վերջինիս կողմից լիազորված ֆիզիկական անձի հետ:

Վերոգրյալից ելնելով «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Հայկ Մարտիրոսյանի, ցանկություն ունի մասնակցելու «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/243» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում կնքված գնման պայմանագրի արդյունքի ընդունմանը: Մասնավորապես համատեղ մասնակցելու «ԷԼՍԵ» ՍՊԸ-ի կողմից մատակարարվելիք 1100 լիտրանոց 2500 հատ աղբարկղերի ընդունմանը: Ընդունման գործընթացին մասնակցելու է ընկերության տնօրեն Հայկ Մարտիրոսյանը: ***Ընկերության էլեկտրոնային հասցեն և հեռախոսահամարն է՝ business.real@mail.ru, 095-88-59-09:***

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՏՆՕՐԵՆ **Հ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

«ՌԵԱԼ ԲՈՒՍԻՆԵՍՍ» ՍՊԸ
Արաբկրի, Ադոնց 6/2, 40
ք. Երևան 0014, Հայաստան
Հեռ.: +37495 88-59-09
Էլ. Փոստ: business.real@mail.ru

"REAL BUSINESS" LLC
Arabkir. Adonts 6/2, 40
Yerevan 0014, Republic of Armenia
Tel.: +37495 88-59-09
E-mail: business.real@mail.ru

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ես՝ Ռեալ Բուսինեսս ՍՊԸ-ի տնօրեն, Հայկ Մարտիրոսյանս, սույնով հավաստում եմ, որ «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/243» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում կնքված գնման պայմանագրի արդյունքի ընդունման գործընթացին մասնակցելով չունեմ շահերի բախում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՏՆՕՐԵՆ ՀԱՅԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ